բռնագանձել 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատարանը, նկատի ունենալով նաև, որ քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ դատական ծախսեր առկա չեն, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Գ.Գ.Է. ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «ԼԱՎԱ ԱՂԲՅՈՒՐ» ՍՊ ընկերության՝ գնահատող հանձնաժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել մասնակի:

2. Անվավեր ճանաչել «ԼԱՎԱ ԱՂԲՅՈՒՐ» ՍՊ ընկերության թիվ ԼԱԱՍՊԸ-ԳՀԱՊՁԲ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի 12.06.2023 թվականի թիվ 2.1 արձանագրությունը՝ «Գ.Գ.Է. ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերության հայտի մասով, իսկ մնացած մասով պահանջը մերժել:

Որպես հետևանք անվավեր ճանաչել «ԼԱՎԱ ԱՂԲՅՈՒՐ» ՍՊ ընկերության թիվ ԼԱԱՍՊԸ-ԳՀԱՊՁԲ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի 14.06.2023 թվականի թիվ 2.2 արձանագրությունը:

3. «ԼԱՎԱ ԱՂԲՅՈՒՐ» ՍՊ ընկերությունից հօգուտ «Գ.Գ.Է. ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

4. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**